ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 ապրիլի 2019թ. թիվ 159-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական և ծնողական խորհուրդների նախագահների 18.03.2019թ. գրությունները և Շիրակամուտ համայնքի ղեկավարի 19.03.2019թ. թիվ Ե-03/71 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Պապիկյան Արուսյակ» բառերը փոխարինել «Գրիշկյան Սուսաննա» բառերով, «Կուրղինյան Քրիստինե» բառերը՝ «Պապոյան Մանե» բառերով, «Օհանյան Կարինե» բառերը՝ «Մազմանյան Համլետ» բառերով և «Համբարյան Վաղարշակ» բառերը՝ «Օհանյան Արտյոմ» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Ֆլորա Կարապետյանի, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Նարինե Չարչյանի և համայնքի ղեկավարի կողմից առաջադրված Հենրիկ Իգիթխանյանի թեկնածությունները:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 3
ք.Վանաձոր